

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մասեաց Աղաւնին առաջիկայ 1862-ին մէջ եւս պիտի հրատարակուի այս տարուան պայմաններով, եւ խմբագրողացը կողմանէ անպակաս պիտի լինի ջանքն ու մտադրութիւնը՝ որպէս զի թէ ըստ ոճոյն՝ օգտակարութիւնն ու զուարճութիւնը աւելնայ, եւ թէ ըստ բաժանման եւ առաքման՝ անվրէպ կանոնադրութիւնը պահպանուի: Ուստի եւ ընթերցասէր բաժանորդներէն կիսընդրուի որ բարեհաճին իրենց կամքը որքան կարելի է շուտով յայտնել մեր Գրասենեկին, յուղարկելով տարեկան գինը, որ է լոկ հայերէն մասին համար 6 րուպլի արծաթ. եւ լոկ ռուսերէնին 4, իսկ հայերէն եւ ռուսերէն մասերուն իմիասին 8 րուպլի արծաթ:

Եթէ այս 1861 տարուանս մէջ ալ երբեմն ամսագրոյս քանի մի թիւերը ուշ հասան բաժանորդաց ձեռքը, պատճառը ոչ թէ խմբագրողաց եւ գրասենեկիս անհոգութիւնն էր, այլ տեղ տեղ շոգենաւուց երթեւեկութեան դժուարութիւնները, եւ քանի մը տեղերու ալ նամակատանց անսովոր դիպուածները կամ հանգամանքը: Այսպէս ահա հոկտեմբերի 14-ին Թէոդոսիայէն դէպ ի կովկաս զնացող սուրհանգակին տարած թղթերն ու փողերը կորսուեր կամ կողոպտուեր էին. ուստի նաեւ ամսագրոյս նոյն սուրհանգակով այն կողմը յուղարկուած տետրակները. որով հարկ եղաւ քանի մը օրէն դարձեալ յուղարկել զանոնք կովկաս: